

Տարեկան գինը 10 թուրքի կէս տարվանը 6 թուրքի

Առաջին հարցը: Ինչպե՞ս հասնում եմ իմ հարցերին:

() Թարաքաղաքացիք գիմու՛մ են ուղղակի
Тифлисѣ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նաչի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունելում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

RELL

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միշտ այսպէս է.— Դե երբին տեսնւի լին: Դժամակ Ալէքսանդրապոլից:— Արտաբէն տեսնւի լին: Ջրանսկա: «Մասիկ» յօդածք Մանհոնու զատարանի առիթով: Հայտատանի ստերանդակ: Դժամ Թիւրքապոլ: Զէրնօգորի:— «Մասիկ» հեռագիւնը:— Զայտարաթի լիններ:

ՄԻՇՏ ԱՅՍՊԷՍ Է

Երբ որ ոչ մի տեղ չը կար,
որտեղ կարելի էր տեղական թա-
տրոնին ապաստանել, ամեն-
քը ասում էին՝ ի՞նչն ոչ որ չէ
յանձն առնում մի թեթեւ թա-
տրոնական դահլիճ կառուցանել...

Այժմ շինվեցաւ մի թատրոն-
նական դահլիճ, որ գրեթէ նոյն-
քան մեծ է, որքան մեր ամա-
րային թատրոնը, որ ունի այդ
վերջնի հետ համեմատելով մի-
քանի առաւելութիւններ անգամ:
Ճշմարիտ է, կազմվեցաւ մի հա-
յոց թատրոնական մասնաժողով
փողեր հաւաքվեցան, վճարվեցաւ
խումբ կազմել և դէկորացիաներ
ու զգեստներ պատուիրել: Բայց
մինչև այժմ չենք լսում թէ դե-
կորացիաները պատուիրած լինէին:
Խումբը, ի հարկէ, այդքան շուտ
չէ կարելի կազմել իսկ ուրիշ
խումբ չունենք:

Երբ պէտք է թատրոնի բացման հանդէսը կատարվէր, թատրոնի շինութեան տէրը մասնաւոր կերպով յայտնեց որ առաջին օրվայ համար ճրի է տալու իր դահլիճը, որպէս զի հայերը ու վրացիները ներկայացումն տան: «Մշակի» խմբագրութեան մէջ սկսեցին հաւաքվել օրիորդներ և երիտասարդներ որ մի պիէսա ընտրեն, և որպէս սիրողներ, առաջին, բացման ներկայացումն տան նոր թատրոնում: Այն ժամանակ սկսեցին ասել թէ թատրոնի տէրը ինտրիգաներ է սարքում, կամենում է ինքն իր խումբը կազմել և այլն...

Այժմ դալիս են Ս. Պետեր-
բուրգից նշանաւոր երգիչներ և ե-
րաժիշտներ: Թատրոնը նրանց
վարձով է տրվում: Վարձում ենք
որ Թատրոնի տէրերը իրաւունք
ունեն վարձով տալ իրանց դաշ-
լիճը, որի կառուցման վրա բաւա-
կան փողեր ծախսեցին: Բայց ա-
հա հասարակութիւնը սկսում է

բողոքել՝ ի՞նչի առաջին ներկայա-
ցումն հայերին և վրացիներին չը
տրվեցաւ... Իսկ մենք հարցնում
ենք՝ ի՞նչի հայերը և վրացիները
չը մտածեցին պատրաստվել ա-
ռաջին ներկայացմանն համար: Կամ
ձեզ պատրաստելը պահանջում էք
նոյնպէս թատրոնի տիրոջ:

Վերջապես մեր հասարակու-
թեան հետ գործ ունենալու ժա-
մանակ մարդ չը գիտէ որ ջուրն
ընկնի: Կազմում ես ներկայա-
ցումս,—դժգոհ են, չես կազմում,
—նոյնպէս դժգոհ են....

Q. U.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷԳՄԱՆԳՐԱՊՈՒԻՑ

15 մայիսի

Ավերազել Շիրակայ, գլխավոր բոլորովին գուրեզ է տունիկերից և չը կայ մի գիւղ կամ քաղաք որ մի քանի հատ ծառեր ունենաւ իր մէջ (չտաներ թէ ալգիներ և պարտէզներ), վանորոյ կայրոյ կմ ասել, որ ալգեդորուսթիւնը և բուսականութիւնը այս գլխաւի մէջ վերջին ծայր ընկած և անհետացած լինակի մէջ է, չը նայելով, որ հողը չարիւղանց բարեբեր, զօրեղ և խիտ ընդհանակ է ամեն տեսակ ընդդէմները առաջ բերել և պտղաբերել ինքէ մարդու ձեռքը մշակում, վարում և ցանում է: Գարնան ժամանակ թէ մարդ ցանկութիւն ունենայ մի երկու օր ճամապարհորդելու այս գլխաւի ուստի-տաճկական նախկին սահմանները բաժատել Ալթիւնայ գետի միւս կողմը, ուս կը հիւսնայ, կը սրահանայ երբ կը աչքի առաւել կը տեսնի լայնածաւալ դաշտերը ինքնաւորյն կերպով բուսած և մինչև երկու արշին բարձրացած կանաչ խոտովը, որ առատութիւնը ապացուցւում է նրանով որ կէս մասը մուռ է առանց հնձելու և գիւղացիք ստորորութիւն են արել ամեն աշնան սկզբներում մի փոքր քամի եղած երեկոներին կրակ տալ խոտին առատ մնացորդը և հեռուից նրա վառաւոր բոցերովը գտաբանել բաց ծառեր անկելու համար Շիրակ գլխաւի բնակիչները կարծում թէ անաչ դաղափար չունեն, որը չափազանց դարմանում է մարդուն: Ասելով թէ կիլեան երկրի դիրքի բարձրութեան նկատմամբ այստեղ չատ խիտ է, բայց չէ կարելի ասել, որ տունիկը չեն առաջանայ այդ պատճառով, որի համար միայն մի փոքր խնամաւորութիւն է հարկաւոր: Թող մարդիկ չը զրաւելն օդոդատու ծառեր անկելու, որովհետեւ դարձեց անկել խնամը պահանջող են ձմեռը ցրտից պարսպանակում, բայց ինչի համար չը տնկել օրինակ չինարի և ուռնիների հասարակ տունիկերը որոնք ոչ մի խնամքի էլ կարող չեն: Արդեօք դա էլ մի տեսակ ստորորութիւն է Շիրակայ գլխաւի բնակիչների համար թէ միայն ծուռութիւնն է պատճառ որ դրանք դարեւոր ժամանակամիջոցին գուրկ են մուռ ընտրեան ամենագեղեցիկ գարիկից և մարդուն կենած և ուրախութիւն պատճառող ծառեղից, թէ արդեօք ժողովրդի թշուառութիւնը, ստորութիւնն է պատճառ, որ տաճիկ արքայականութեան ժամանակ միջոց չեն տուել խեղճերին այդ օգտուէտ կէտի վրա ուշք դարձնել, որովհետեւ ինչպէս յայտնի է, հայ գիւղացին կրէք չէ կարողացել հաստատ կանաչ թէ իր բնակած գիւղաւում տարբեր շտորանակութիւնը որքան երկար ինչոց կը տես, չարտեմուս այսօր այստեղ է, բայց վրա օր տաճիկ կառավարութիւնը գուցէ գիւղաւորներ լաւ, յարմար ու հպեիր ձեռքով մշակված

դիմրը անմեղիվ հայրն կարտաքսէր և նրա տեղը թխաբեր ընակեցնել կը տար: Այս մերջին պատճառը շատ հաւանական է, որ միշտ տեղիք է ունեցել և հայ դիւապցին միշտ կաակածեղիվ իր հատուտ ընակութեան վրա, համոզեղած է եղել, որ անպատճառ գաղթել կը տան և նրա աշխատանքի պտուղը կը վայելէ տանիքը, վստահ որոյ այդ դործիվ վրա ուշք չէ դարձրել: Այս փատտը հաստատուած է և նրա՞տով, որ այս գաւառը դիւադըր մերկու մղն տարածութեան հեռու և ուղիղ ճանապարհի վրա չէ կարելի նկատել մինչև բաղրավին մէջը չը մտնես, որ այն տարապիկի խոչընդ աչքիդ երևան, բացի նին վանքերի մնացորդ աւերակները և գլխաւորապէս տանկի կառավարութեան ձեւով շինեղած չորս անկիւնի քարաշէն շինութիւնները որ ամին մի գիւղում երևում են և ծառայել են իրր տեղութեան շտեմարաններ, ուր անեղ են դիւապցիներկց ժողոված ընական տուրքերի տասնորոշները և ով դիւե 20—30 երրորդները:

Հունեակերից կամ բուսականութենից դուրի է և Ալէքսանդրապօլը և շատ անմիջեմար այդ կողմից, բայց պէտք է ասած որ Ալէքսանդրապօլը համեմատելով Շիրակ գաւառի, Ղարս քաղաքի և այլ գետաբնիկ գիւղերի հետ դեռ շատ և շատ բարդ դաւար է, որ ունի քաղաքից մի փոքր հեռու բերդապատկան մի փառաւոր և սքանչելի այգի (Չէրքէզի ձոր) անունով: Աքանչելի ասացի, որովհետեւ դա թէ իր բնական դիրքով ու տեւքով և թէ բազմաթիւ հասակաւոր ծառերով և կամաչներով աչրեան գիւղիցիկ է, որ ներս թափող և թափող լիւր հոսանքից երբ մարդ քաղաքի սարավանդի լեռից և շրջի մինչև խեղդվելու աստիճան ձանձրացած, նեղացած ներս է թափում այդ այգին. կարծես մի այլ երեխակայական աշխարհ է երևում մարդուն, որտեղ ձորի չորս կողմերից հոսում են բազմաթիւ կարկառահոտ փոքրիկ աղբերակներ մարդու ու անուշահամ ջրերով, որոնք թփովովով ձորի մէջ կազմում են համարեա մի փոքրիկ գետակ: Որը վերին աստիճան մարդու, բոլորովին ազատ քամիներից և թուղիքից և օրըստօրէ չնորհւա բերդի կառավարիչ (համեմատաբար) գեներալ Կլոստր, աւելի գեղեցկանում է, անքրքրում է, ծառուղիներ և ճանապարհներ են շինվում, նստարաններ են դրվում, շարքեր երկու անգամ երաժշտութիւն է անվում և երկպոքները պարահանդէսներ լինում, և որ աւելի գլխաւորն է մի փառաւոր բոստոնգա է շինված բեմական յարմարութիւններով, ուր թատրոնական ներկայացումներ պէտք է տեղի ունենան մայիսի 15-ից սկսած: Ղեկավարս պէտք է ասած, որ քաղաքացիք այդ դէպքում պարտական են պ. Երմտին, որ կարելի կազմին չափ աշխատում է քաղաքացիների կհանք մի փոքրիկ փոփոխութեան հետ թափել: Եւ այդ առթիւ երկու շարքի առաջ յայտարարութեան թերթեր բաժանուելցին քաղաքի մէջ հետեւեալ բովանդակութեամբ, որ մայիսի 1-ից «Չէրքէզի ձորի» սեղանը սկսուել է, ուր ցանկացողները կարող են ձաչել, ընթրել, պարահանդէսներ ներս ներսից գտնվել և այլն և այլն: Ուսում մայիսի 10-ին Համբարձումն օրը, (հայ ընտանիքի համար այդ նշանաւոր տօնի օրը), բազմաթիւ ընտանիքներ հարսու աղջկաներով, երեխաներով, մածիկ թէ հեռու ազգականներով ու ծանօթներով մէկ տեղ, առաւօտանայցի վաղ ժողոված էին սպոյտեղ. դրանք կանաչ խոտերի վրա ընտանեաբար հացի տիւտոց-տիւտով փուած, աղբիւրների մօտ լիւանց սամովարները մարքած ու կարգած՝ իրանց ընտանեկան անմեղ ու համեստ զուարճութեան ու զրօսանքի ետեւից ընկած ժամանակ էին անցկացնում ի պատիւ պ. Կլոստրի, որը ինչպէս յայտնի է, չափազանց դոհ է վրնում երբ տեսնում է իր չնորձով և խնամով բաւերկարագլուծ այցելում զայլու է դրօնակու և տեղաւայի հայ ընտանիքը:

Ճամբը հասնելը հաշիկայ յետոյ, որ հսկելու համար մտայնաբար պահելով մի կերպով ընկերներով, չարախաղաց զոհարարով և ուղիով ժայռով, բայց երեւակային է-հաշիկ, որ բացի ինձ և չափ ուրիշները տարաբար զգարողութեամբ կանգնել անհամար տեղերի վերաբերմամբ արտով, զգարողութեամբ պատուով և լայնածախ վատ տարաբար-թիւներով, Ահաւայտիկ պատճառներ:

Մեր ներս մտնելու ժամանակ եկա մի ղինւորական բժիշկ, երկու տիկիններ հետ. ունեւորով, որոնք շտապեցին ղէպի այգիի աւազանը և այնտեղ կանգնած մի քանի հասարակ ղինւորներին յիշար բժիշկը հրելով բժիշկով հրամայեց իսկոյն հեռանալ այնտեղից. մենք էլ կարծեցինք թէ երեի կարգ պահպանելու համար է և այդ ղէպից գոհ մնացինք, բայց տարաբաղդաբար հագի մի քանի ծառաղիներ անցել էինք, յամկարծ ամին ճանապարհների և անցքերի վրա կանգնած պահպաններ տեսանք մըտրակներով և փայտերով ղինւորված, որոնց, ինչպէս իմացանք, պատվրած էր, (չը գիտեմ որ իշխանութիւնից) որ անխնայապէս և առանց պատճառի հատարակութիւնը հեռացնել անցքերի վրայից ասպարէզ մաքրելու միայն օֆիցէրների ազատ դըստանդի հետ, որտեղ և ղինւորները հնազանդ իրանց խիտ ղիցղալիշային սկեցին իրանց պաշտօնը ամնայն ճշդութեամբ և առանց բացառութեան կատարել: ճանապարհների մուտքերը ծածկեցին, մօտ եկողներին և իրաւունք հարցնողներին սկեցին հարուածներ և անըպարզալարի պատասխաններ տալ, կանանց, հարսներին և օրիորդներին ոչխարի հօտի պէս առաջ անել և շտապ քայլերով հեռացնել, նրանց մի քանիսի ետեից փայտի ծայրով բռնել և հրել համարձակվելով, վերջապէս որ մէկը յիշեմ, երեսն դանք և հասակաւոր մարդկանց մէջքերին հարուածներ էր որ տալիս էին ամնայն զօրութեամբ, Մենք որ մի փոքր ղըսնելուց յետոյ նստած անխուով սրտով ականատես էինք այդ տեսարանին, վերկացանք փորձ փորձեցինք չարոճակել մեր ղըստանքը, մտածելով գուցէ միայն հասարակ ժողովրդին է արդիւնում ծառաղիների մէջ դըսնելու, բայց ոչ, մեղ էր մարդեցին ղինւորները պատասխանելով «ТЫТЪ ТОЛЪКО ГОСПОДА ДОЛЖНЫ ГУЛЯТЬ» Ահաւասիկ երկակայնեք ձեղ մի հասարակական այգի, որին այդ փառաւոր վիճակին հասցնելու համար փող են ժողովել և քաղաքացիներից և նրանց թոյլ են տըված ազատ ներս մտնելու, իսկ յետոյ առանց պատճառի հակառակ մարդկային օրէնքի, հակառակ միտքի անգամ ղէպի գեղեցիկ սեղը ունենալու պատկառանքին ու պատրիկին նրանց փայտի և մուրակի հարուածներ տալով և հայդելով հաշածում են այնտեղից և ոչ որ էլ չէ համարձակվում (ձէնց ղարմատւին էլ այդ է) պատճառը հարցնելու: Անկարգ քաղաք. ինչպէս իրանք ալէ քանիդրապօլիցը շատ անգամ կրկնում են: Բայց հաւատացնում եմ ընթերցողներին, որ ես պարսկաստանից լինելով եմէ իմ հայրենիքում այդ տեսակ վարմունք տեսնել ղէպի հասարակութիւնը՝ կարող էի ներողաբնութ լինել, բայց չստ ջաւալի է, երբ տեսնում եմ այդ մի գաւառական քաղաքում, ուր փոքր ի շատէ քաղաքակրթութեան հոտ է փչում. Ուստի համարձակվում եմ պ. Լընտտի ուշադրութիւնը հրաւերել այդ բանի վրա որով և մեծ յոյս ունեմ որ պարոնքը այդքան ջանք և աշխատանք թափելով այգիի մէջ, նրա նպատակին և ցանկութեանը իսկ հակառակ է այդ տեսակ վարմունքը ղէպի ալէ քանիդրապօլից և օտարաբարաբացի հասարակութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԻՍ

Քանի որ է շարունակ, որ պատգամաւոր-
ների ժողովը բացառապէս զբաղված է գլխա-
ւոր զինուորականների ծառայութեան կանո-
նաւորելու հարցով. վերջին ժողովում էլ բո-
լոր վիճաբանութիւնները վերաբերում էին
այդ հարցին, և չը նայելով որ բոլոր նիստի
ընթացքում այդ հարցից աւել ոչ մի ուրիշ
հարցի մասին խօսք չը բացվէր, այնու ամե-
նայնիս այս անգամ էլ ժողովը ոչ մի կատա-
րեալ եղրակացութեան չը հասաւ: «Le Pays»

լրագրում հրատարակված մի յոթուածի մասին, պետական գործերի կնքապահ (garde des sceaux) մի խնդրի ներկայացրեց ժողովին, որպէս զի նա բարեհաճի պ. Պոլ Ասատեանին պատասխանատուութեան հրաւիրել: Պետական գործերի պ. կնքապահը ցաւ է յայտնում որ նա ստիպված է մամուլին վերաբերել մի բողոք յարուցանելու: Նա ուշադրութիւն չէ անում թէ ինչ զոյնի լրագիր է այդ թերթը, միայն նա դէմ է առհասարակ մամուլին դէմ որ և է բողոք յարուցանելու սկզբունքին: Բայց մի և նոյն ժամանակ նա ասում է, որ նրան անխափելի է տանել բոլոր այն յօդուածները, որոնցով Պոլ Ասատեանի միջոց և ամեն ժամանակ լքցնում է իր «Le Pays» լրագրի ամբողջ էջերը: այդ գրուածքներին մէջ նա աստիկ կերպով վիրաւորում է հանրապետութեան ամենանշանդուն գործիչներին, դեռ չառ ժամանակ չէ երբ այս մի և նոյն Պ. Ասատեանը մի և նոյն «Pays» լրագրում մի կծու յօդուած էր հրատարակել որի մէջ նա մի քանի անգամ վրա-վրա առաջարկում է պետական գործերի պ. կնքապահին, որպէս զի այս վերջինը իր գործունէութեան մասին հաշիւ ներկայացնէ, իսկ ի թէ ոչ, պ. Պ. Ասատեանի սպառնում է նրան ազգային ժողովի մէջ հարց ու փորձի ելնթարիկ նրան, և այդ բանին Պ. Ասատեանի կատարելով իրաւունք ունի իրեն նոյն ժողովի պատգամաւոր: Պետական գործերի կնքապահ մինչսորը ծարահատած և այլ ևս չու կարողանալով տանել բոլոր այս կրկնակի վիրաւորանքները ու անպատուութիւնները, վերջապէս խնդրեց պատգամաւորների ժողովին որպէս զի նրան թողաւութիւն շնորհեն բողոքի արդարութեան մինչսորին այն բողոք անպատուութիւնների դէմ, որ պ. Պ. Ասատեանի անում է թէ նրա անձնաւորութեան և թէ հանրապետութեան ամենաջերմ պաշտպանների դէմ:

Մինչսորի այսպիսի բողոքից յետոյ, պ. Ասատեանի իր կուսակիցների մէջ մի այնպիսի վահան է որոնում որի ետևից, նա կարողանայ կարելի եղածին չափ արիւնահեղ պատերազմ փորել, և մի և նոյն ժամանակ անձնական ապահովութեանը փնտս չը հասցնել: Դեռ ոչինչ յայտնի չէ թէ ժողովը ինչ վախճան կը տայ այս կնքապահ հարցին:

Պատգամաւորների ժողովը ձախակողմեան հանրապետականները այս վերջին օրերս զու-մարմեցան և վերջ դրին այն հարցերից մէկին, որով հասարակական կարծիքը աստիկ յուզված էր երևում, դա պ. Բլանկիի հարցն է:

Ամենքն էլ մի ակամայ յուզմունքով սպասում էին թէ ինչ պէտք է լինի մի այսպիսի նշանաւոր խնդրի վերջը: Այդ խնդրի վերջը լրագրիւններից շատերն արդէն գուշակել վերջացրել էին, և իրաւի այդ լրագրիւնները իրանց մարդասիրութեան մէջ չէին սխալվել: Այդ խնդրի վերջը ասացաւ նրանով, որ հանրապետականները միաձայն հաւանութեամբ մերժեցին նրան և ընտրութեան միջոցը ապօրինի համարեցին:

Հանրապետականները աստիկ ցաւում են, որ պ. Բլանկիի պէս մի մարդու ընտրութեան գործը այդքան անմիջապէս ելք ունեցաւ, բայց ինչ անէին նրանք:

Չը նայելով որ բոլոր հանրապետականները սրտանց համակրում ու յարգում էին նրա անձնաւորութիւնը, այնու ամենայնիւ նրանք ստիպված էին մերժել նրան, որովհետեւ հաւատարմութեանը նրանք օրինաւոր կը զրան-վէին նոյն իսկ կանոնների դէմ, որոնց իրանք են քուշարիւղ: Եւ բայց այդ, զրանով նրանք մի սարսափելի դէնք կը տային հակառակ բանակի կուսակցութիւններին: Բլանկիի չնտար-վելու մասին, ամենից շատ կառավարութիւնն է մեղաւոր, որը թողութեան գործի ժամանակ ամեն արտօնութիւն ունէր օրէնքը այս տեսակ կամ այն տեսակ գործ դնել:

Ժողովից յետոյ մի և նոյն մարդիկը, որոնք

10—15 րօպէ առաջ մերժեցին նրա ընտրութիւնները, գնացին պ. Բլանկիի մօտ յայտնելու իրանց սրտի խորին ցաւակցութիւնը նրա չընտրվելու մասին:

«ՄԱՍԻՍ» 809-ՈՒԱՅԸ ՄԱՆԿՈՒՆՈՒ
ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Կրակիւններ կան, որք իրենց անուն մ'ընելու կամ ընթերցող գտնելու համար ամեն առ-թիւ վիճաբանութիւն հանել կուզեն, խրճ-բանքն իրենց սկզբունք բռնելով: Կերելի որ «Կրակիւն» ալ այս ընթացքը բռնած է «Մասիս» նկատմամբ, և իրեն սկզբունքը բռնած է գրել թէ «Մասիս» հետ վիճաբանութեան միջոց նկատ համար անոր սեւ բաժնի սպիտակը սեւ և փոխադարձաբար: Սաոր առաջին ա-պացոյցը տուաւ Կաթողիկէ Հայոց խնդրոյն մէջ: Սեւ կը ցաւէինք այդ հասարակութեան մէջ ծագած աղետալի պատահման վրայ, և մեղադրած էինք անոր հեղինակին. իսկ «Կրակիւն» ինք ևս իր թէ կարծիք մը յայտնած երևնալու համար ելաւ մեր դէմ հերքում գրեց առանց ամաչելու վատաբար ազգակործան սկզբունք մը պաշտպանեց և ազգային երկ-պատակութեան հեղինակ հանդիսացող անձի մը փաստաբան կանգնեցաւ:

Այժմ ալ ուրիշ կերպիւ կընէ իւր հակա-ռակախօսութիւնը: Ամեն թերթ, որ ազգա-յին եկեղեցական նուիրակութեան որ և է արատէ գերծ լինելուն և իւր նուիրական կուսման արժանապէս պատասխանելուն ի սրտէ փափաքող է, հարկաւ պարտք կը համարի իրեն, երբ սաոր հակառակ ընթացք մը լսէ հասարակութեան ատենը հանել, որպէս զի հեղծունէներուն դէմ բարոյական զարդութիւն մ'ի գործ դրուի: Ահաւասիկ այս սկզբունք էր որ «Մասիս» երբ իւր Ռուսիոյ թղթակցէն նա-մակ մ'առաւ էջմիածնի վիճակին վրա, ար-ժան համարեց անոր պարտականութիւնն Հայ հասարակութեան ատենն հանել, բայց ընդ-հանրական Աթոռին պատիւն յարգելու հա-մար նամակին բնագիրը չը հրատարակեց, որ աւելի ծանր էր, այլ անոր համառօտ քաղ-ւածքը տուաւ, իւր կողմէն խորհրդածութիւն-ներ յաւելցնելով, որք մասամբ իւր կը մեղ-մէին յայտնած իրողութիւնները:

Այս բանը միթէ հակառակութիւն կամ թշնամութիւն մ'է Վեհ. Կաթողիկոսին և նորա «Համախոհներուն», դէմ: «Կրակիւն» այս-պէս ներկայացնել կուզէ, բայց յայտնի է որ Մասիս երբ Վեհ. Կաթողիկոսին ազգաչէն գործերը տեսած է, փութացած է գաննիք զովութեամբ հռչակել, ինչպէս բրած է նաև իւր վերջգրեալ յօդուածին մէջ. այսու ամե-նային Հայաստանեայց եկեղեցին անխալ Պա-պովութիւն չը ճանաչէր և այս պատճառաւ իւր նուիրակութեան ամենէն բարձր կարգէն սխալ ըլլող անդամները չեն կրնար քննա-դատութիւն և ամբաստանութեան ազատ լի-նել, երբ իրենց սրբազան պարտուց հակառակ վարուին: Ուստի ոչ միայն «Մասիս» այլ և ամեն լրագրոյ պարտք է, երբ այնպիսի զեղ-ծունէներու վրա տեղեկութիւններ առնուն հասարակային ատենը հանել ի զգուշու-թիւն ամենեցուն. քանզի այն տեղեկութիւն-ները ծածկելը կուսակցութեան ոգւոյ հնա-զանդիլ և պարտազանցութիւնը քաջարեւի է:

Որ թերթ կրնայ այս սկզբունքը հերքել՝ առանց մամուլի հիմնական պարտականութիւնը ժխտելու:

Բայց մեր ընդդիմախօսն ինչ ապացոյց ունի մեր թղթակցին տուած տողեկութիւններն հերքելու: Աչինչ: «Կրակիւն» ալ Կ. Պոլսոյ մէջ կը հրատարակի, և հարկաւ ձեռնհաս չէ բուն տեղէն գրուած իրողութիւնները հեր-քելու. սաոր համար էր որ մէջ այս գործն «Արարատ» ամսագիրին կը թողուինք. նա ստոյգ տեղեկութիւններով կրնայ հերքում հրատարակել, և մեր ռուսաստանցի թղթա-կիցը զանոնք աչքէ անցունելով, ի թէ անս-

տոյգ բան մը տեսնէ՝ կրնայ ուղղել խնդիրն այսպէս կը պարզուի:

Դառով Գեր. Վահրամ եպիսկոպոսի համար «Մշակէն» առնելով մեր հրատարակած քննի մի տողերուն, ն. Գերապատուութիւնը կրնայ անձամբ պատասխանել «Մշակին»: Եթէ Տփլիս-սեցի թերթին բաժնը սուստ և զգալարու-թիւն մ'է, մէք ծառայութիւն մ'ըրած եմք Գեր. Վահրամ եպիսկոպոսին իրեն դէմ եղած ծանր ամբաստանութեան մը լուրն իւր աչքին առջև դնելով:

«Կրակիւն» ասի վերջը կը հարցնէ մեզ թէ արդեօք հոս մեր աչքին առջև չը կան գեղ-ծունէներ, թէ Պատրիարքարան մը «պաթաղ-հանէ» Պատր. Փոխմարդ մը որբոց և այրեաց իրաւունքը կապող չամբաստանեցաւ: Այո, խիստ լաւ կը յիշեց այս բաները, բայց միթէ ասոնց վրա քննութիւն չը բացուեցաւ, միթէ ամբաստանեալ փոխմարդն ինքնին հրաժա-րելով դատաստան չը խնդրէ: Ուրեմն Կ. Պոլ-սոյ Պատրիարքարանին մէջ եթէ գեղծում մը լինի՝ չը ծածկուի, այլ հրապարակ կենի, քննութիւն և դատաստան կը բացուի: Աշ-խարհիս ամեն կողմ, ամենէն քաղաքակիրթ երկիրներուն մէջ իսկ կրնան գեղծումներ պա-տահալ, բայց խնդիրն սաոր վրա է որ քննու-թիւն ու դատաստան լինի: Երբ դատաստան կայ՝ արդարութիւն կայ, և այս բաւական է:

Ո՞վ կարգելու Վեհ. Հայրապետը քննու-թիւն մը բանալու, եթէ գեղծումներ կան գտնելու և անոնց հեղինակները պատժելու, որպէս զի զայնպիսի միջոցները բուժին:

Եթէ «Կրակիւն» անուն թերթն ևս Կ. Պոլսոյ կեդրոնական վարչութեան մէջ գեղծում մը տեսնէ, միթէ ազատ չ'է զայն հրատարակելու և ինչ բանի կը ծառայէ իրեն ըսել թէ վարչութեան շուրջը գտնուող անձինք սիրելի և մոտիմ են եղեր Մասիսին: Փոխմանակ անո-րոշ ամբաստանութիւններ ընելու, թող որոշ իրողութիւններ յայտնէ, թող խնդիրն ազգա-յին ժողովոյ ներկայացնէ, արդարութիւն և դատաստան պահանջէ, փոխմանակ անպիտան զրակախութիւններ ընելու:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՐՉԱՆԻՍԱԿ

Երևմտից նախարարութեան կողմէն հրա-տարակուած յայտարարութիւնը կը ծանու-ցանէր թէ ներկայ մարտէն սկսեալ՝ փոխա-նակ թղթաւորամի մէթ ալիքով պիտի վճարուին տուրքեր: Բայց Վանի կառավարու-թիւնը Մարտէն առաջ այսինքն հին տարիէն մնացած ապառիկ տուրքերն ալ մէթ ալիք-ով կը պահանջէ: Արդեօք երևմտից նա-խարարութեան հրատարակած յայտարարու-թիւնէն չ'էր յայտնուիր որ մէթ ալիք պա-հանջելու որոշումն ներկայ տարւոյն տրոց վրայ գործադրուելու է և ոչ թէ ապառիկ տրոց վրայ ալ:

Այս շարժու կառավարութիւնն սխաժ է հաւաքել բռնի՝ ամէն տեսակ արծաթի և ոսկի անօթներ և գործածներ, ուր որ տես-նէ, ասելով թէ Բ. Գոնէն հրաման եկած է այս բան անել, փան գի պետութիւնը մեծ պէտք ունի արծաթ և ոսկի դրամներու: Այս պատճառաւ մեծ նախազուգուութեամբ ամեն ոք կը ծածկէ ինչ որ արծաթ կամ ոսկի է, ժամացոյցներու շղթայներէն սկսեալ մինչև ա-մենէն թանկագին զարդեր, եթէ կան: Գոնար չէ զիտնալ թէ կառավարութեան արդարաւէր պաշտօնեայք աւելի հետամուտ են Հայոց զարդերը գրաւել և Թուրքներն չեն հրաւիրեր օգնել կառավարութեան: Բաց աստի տեղւոյս ժողովրդէն մարդ գուլս մէկ հարիւրնոց թղթ-թաղրամ կը պահանջուի իրը հանգանակու-թիւն թղթաղրամի վերցնելու համար: Այս-պիսի ժամանակ մը յորում ժողովուրդը չարա-չար կը տաքնապի դրամական անձկութեամբ, երբնայ կերպով արտաքոյ կարգի ծանր տուրք մը պահանջուի՝ մեր բարեկեան կա-

ռավարութեան զթափուութեան շատ հակա-ռակ է, սակայն չը գիտնիք թէ ինչպէս և-րած է որ այս որոշումն արեր է:

Բռնի ամուսնութեան առաջատուն փախ-չող ծանուցեալ աղջիկն զոր Ալալ պէշին իւր տուն կը պահէ, դեռ չը յանձնեցաւ Սուալիորդարանի և ոչ ալ իւր ամուսնոյն, վանդի կառավարութիւնն, չը գիտցուիր ինչ պատճառով, յանձն չառնուր յանձնել օրիորդն և կասն թէ մտադիր է աղջկան կամքն առ-նուլ և այնպէս վարուիլ իւր հետ: Շատ ցա-ւալի բան է այս որ կառավարութիւնը կուզէ մեր կրօնական և ամուսնական ամենափափուկ խնդիրներուն միջամտել: Թէպէտ և ամէն ազա-տամիտներ չեն կրնար զովի բռնի ամուսնու-թեան մը ձեռնարկութիւնը, յոր մանրամաս-նութիւնը մեր նախորդ նամակներով գրած եմք, սակայն և չէ կարելի չը ցաւիլ տեղւոյս կառավարութեան ներկայ ընթացքին վրայ, որ կուզէ չը ճանցնել մեր եկեղեցոյ նուիրա-գործուած իրաւասութիւնը:

Մարտ 29-ին մի լարան ալ աւելացաւ Վան, որ բացուեցաւ Հայկականից թաղին մէջ Հայկական Ընկերութեան ձեռքով: Այս միջոցիս չորս լարան կայ Վանայ մէջ, որոց հնագոյն և անդրանիւն է Հայրենասէր Ընկե-րութեան լարանը, զոր բացած է Մ. Փոր-թուգալեան էջ. 1876 նոյեմբ. 1-ին, երբ առաջին անգամ Վան եկած էր: Այս լարա-նը իրեն կենտրոնական կաթալ կը նկատուի միւս լարաններուն որոց շոգի կը տայ անա-խանարար: Հայրեն ասէր և Ս. զգանուէր Ընկերութեանց լարաններն կիսամեայ են, իսկ մնացեալներն ամսական են. այսինքն ա-միսի մէջ մի անգամ կը բացուին: Ժողովուր-դը միշտ լսելու տեղ ունի, զի ամեն կերակի անպատճառ չորս լարաններէն մէկն բաց կը լինի, հետեւապէս կը վազէ: Լարաններէն երեք սովորութիւն բրած են Հայրենասէր Ընկերութեան լարանի ուղղութեան հետե-ւիլ, զոր Փորթուգալեան էջ. սահմանած է և զոր նոյն ընկերութեան ներկայ տեսուչ պ. Մարկոս Նաթանեանն ալ անվիպ կը շարու-նալէ: Ամեն լարան ունի իւր հետ և դա-սարան: Կրնամ կարծել թէ Վանայ մէջ 200-ի չափ կիրակօրեայ ուսանողներ կան այժմ, որոց մեծ մասը չափահաս երիտասարդներ են: Վանայ մէջ որչափ գործող և զգայուն մար-դիկ կան, ընկերութեանց անգամներ են: Այն-պէս որ անհար է գտնել անձ մը որ աշխոյժ լինի, զգացում ունենայ և ընկերութեան մը անդամ չը լինի: Բայց թէ կորուստ մի մասը ընկերութեանց վրա ինչ զաղափար ունի, հետեւեալ օրինակէն լաւ կը հասկցուի: Մի քահանայ (ոյր անուն չեմ յիշեր տրժան չը համարելով) մի օր Ս. Վարդան եկեղեցին ծանուցում ընելու. առթիւ յանդիմանեալ ըն-կերութեանց վրայ ալ խօսել և ասաց թէ՛ «գիտե՛ք ինչու կործանեցաւ Բաբելոնի աշ-տարակ»՝ փան գի նոյն ժամանակ ալ յարեց, հիմալուան պէս զանազան ընկերութիւններ կազմուեցան և իրարու խօսք չը հասկնալով, զԱստուած բարկացուցին և զաշտարակն կոր-ծանել տեսնեցին: Եւ այն: Իսկ թէ ժողովրդեան զգայուն մասն ինչ զաղափար ունի տգէտ կողերն վրայ, այդ ալ հետեւեալ օրինակէն քաջ կը տեսնուի: Մարտ 25-ին կիրակի ի-րիկուն՝ մի վարդապետ ոտքի կայնեցաւ քարոզ խօսիլ Թայնկոյններու եկեղեցոյն մէջ, մէջմէ ալ յանկարծ ամբողջ ներկայ ժողովուրդն ձը-գեց դուրս Ելաւ Եկեղեցիէն: Ի՞նչու կը խրդ-րէր վարդապետն չը մեկնիլ, խոստանալով լիւր խօսիլ: Բայց մտիկ անող չեղաւ: Եւ վարդապետն ստիպուեցաւ ոչինչ խօսիլ չը սկսած՝ իւր տեղ երթալ և նստիլ: Տեղւոյս կողերաց ազատ մասը այնչափ կատէ ընկերու-թիւններ, որ եթէ մտիկ ընող լինի, Խա-չա կ'ընթերցուի կը քարոզէ նոցա դէմ: Ըն-կերութիւններն ալ այնչափ լեցուած են նո-ցա դէմ, որ եթէ հար լինէր «Պոստ օրած մոգուց»՝ ի մէկ կրկնութիւն անել խիղճ չէր համարիր:

Типографія А. А. Михельсона